
**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԻ
ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ**

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում 2012 թ. հունիսի 14-15-ին տեղի ունեցավ երիտասարդ լեզվաբանների 2-րդ հանրապետական գիտական նստաշրջանը, որին մասնակցեցին երիտասարդ գիտնականներ Հայաստանից և Արցախից: Գիտաժողովի նախաձեռնողն ու կազմակերպիչն էր ԳԱԱ լեզվի ինստիտուտը:

Երկօրյա գիտական նստաշրջանը ներածական խոսքով բացեց լեզվի ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը: Ողջունելով մասնակիցներին՝ նա ուրախությամբ նշեց, որ նախորդ տարվա համեմատությամբ գիտաժողովն ընդլայնել է իր ծավալները, ներառել քննարկվող թեմաների ավելի լայն շրջանակ և գրանցել մասնակիցների աննախադեպ ակտիվություն: Նա հաջողություն մաղթեց նստաշրջանի մասնակիցներին՝ հույս հայտնելով, որ ավանդական դարձող գիտաժողովը իր նպաստը կբերի հայերենագիտության առաջընթացին:

Գիտական նստաշրջանի առավոտյան և ցերեկային նիստերում լավեցին երկու տասնյակից ավելի զեկուցումներ: Բանախոսներն անդրադարձան լեզվաբանական ամենատարբեր հարցերի ու խնդիրների՝ ընդհանուր և կիրառական լեզվաբանություն, բարբառագիտություն, լեզվի պատմություն, տեղեկատվական տեխնոլոգիաների և լեզվի փոխհարաբերություն, անհատ հեղինակների լեզու և ոճ, թարգմանություն, լեզվի մաքրություն և այլն:

Մասնակիցներից ումանք անդրադարձան համաշխարհային լեզվաբանական մտքի կարկառուն ներկայացուցիչների հայացքներին: Ե.Գրիշկյանն իր զեկուցման մեջ ներկայացրեց ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի համընդհանուր լեզվի տեսությունը (ՀԼՏ) և նրանում կիրառվող համընդհանուր լեզվական կադապարը (ՀԼԿ): Բանախոսը նշեց, որ ՀԼԿ-ի օգնությամբ ՀԼՏ-ն դառնում է կատարյալ համակարգ, որը ունակ է ձևայնացնել յուրաքանչյուր լեզու: Ձևայնացումն առավել հեշտացնում է մեքենական թարգմանությունը և բարձրացնում նրա որակը, որի շնորհիվ հաղորդակցությունն ավելի դյուրին է դառնում: Մ. Սարգսյանը խոսեց կադապարի հասկացության մասին լեզվաբանության մեջ, ներկայացրեց կադապարի հասկացության զարգացումը, տարբեր մեկնաբանությունները ամերիկյան ստրուկտուրալիզմի մեջ, կադապարների զանազան տիպերը: Նշեց նաև, որ կադապարման խնդրին հայ լեզվաբանության մեջ խորությամբ անդրադարձել են Գ. Ջահուկյանը և Էդ. Աղայանը: Գ. Գրիգորյանն անդրադարձավ բառին՝ որպես հաղորդակցական հուզագնահատողական բաղադրիչի հիմնական կրողի, Տ. Միրունյանը՝ լեզվին՝ որպես խորհրդանշանային ձևերի համակարգի Կասիբերի աշխատության մեջ, հոգեբան Մ. Մահալյանը խոսքին՝ որպես հոգեկանի դրսևորումների արտացոլում:

Վ. Խաչատրյանի զեկուցումը նվիրված էր քերականական որոշ իրողությունների բացահայտմանը XVII դ. (1600-1640 թթ.) հիշատակարաններում: Ըստ բանախոսի՝ տվյալ հիշատակարաններում արտացոլվել են ինչպես գրաբարյան, այնպես էլ միջինհայերենյան, վաղաշխարհաբարյան, շատ դեպքերում բարբառային և գրիչների արհեստականորեն կամ սխալմամբ կազմած բառաձևեր, որոնց հիմքը հաճախ գալիս է բարբառներից: Հ. Թադևոսյանի զեկուցումը նվիրված էր Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանում (XVII դ.) առկա այն փոխառություններին և նորակազմ բառերին, որոնք տեղ չեն գտել բառարաններում:

Ա. Ավագյանն անդրադարձավ Շիրակի խոսվածքի արտացոլմանը գեղարվեստական գրականության մեջ, հիմնականում «Ուստա Կարո» և «Հեղնար աղբյուր» վեպերում, Մ. Ավետիսյանը՝ Մեհտիշենի բարբառի որոշ առանձնահատկությունների, Գ. Մկրտչյանը՝ հետնալեզվային ձայնավորների դիրքային տարբերակներին Ապարանի խոսվածքներում:

Ն. Վարդանյանի զեկուցումը նվիրված էր հայերենի կանոնարկման որոշ հարցերի: Բանախոսն անդրադարձավ սոցիալական ցանցերի լեզվին, մտահոգություն հայտնեց, որ, անգլերեն գրելով, մտածողությունն էլ է դառնում անգլերեն, առաջ քաշեց լատինատառ հայերենի, օտարաբանությունների, ժարգոնի խնդիրները: Լ. Ղամոյանը խոսեց օտար բառերի գործածության մասին իրադրային տարբեր արտահայտություններում, հորդորեց օտար բառերից «բեռնաթափել» հայոց լեզուն, անընդհատ վերահսկել սեփական խոսքը: Լ. Սանթրյանը խոսեց գովազդային տեքստերի ոճական մի քանի առանձնահատկությունների մասին՝ նշելով, որ գովազդային տեքստերում հանդիպող և ներգործության մեծ հնարավորություններ ունեցող ոճական միջոցներից են մակդիրը, կրկնությունը և ճարտասանական հարցը: Տ. Սաֆարյանի զեկուցումը նվիրված էր ներգործական սեռին արևելահայերենում և արևմտահայերենում: Ըստ զեկուցողի՝ ներգործական սեռը, չունենալով ձևակազմական ինքնուրույնություն, բացի իր ենթատեսակ պատճառականներից, արևելահայերենում և արևմտահայերենում շատ հատկանիշներով մոտ է, իսկ տարբերությունները հակված են արևելահայերենի նմանաբանությամբ վերածվելու րնդհանրության:

Ս. Համբարձումյանն անդրադարձավ միացման գծիկով նորակազմ բառերին Շիրակի «Հայոց դանթեականը» պոեմում, Ս. Եղիազարյանը՝ կրկնավոր հարադրությունների գործածությանը Ա. Ավագյանի արձակում, Մ. Հովհաննիսյանը Վահան Տերյանի չափածոյի լեզվում առկա որոշ խորհրդանշանների, Ա. Էմին-Տերյանը՝ Ս. Մարկոսյանի «Մեր այդ կողմերը» գրքի լեզվաոճական մի քանի առանձնահատկությունների, Ե. Հայրիկյանը՝ իսպաներենի վերջածանցավոր բառերի թարգմանությանը հայերենում և անգլերենում:

Կ. Առաքելյանի զեկուցումը նվիրված էր մեծ լեզվաբան Գևորգ Ջահուկյանի բանաստեղծական վաստակին: Քննվել էր բանաստեղծական գրքի հուզաարտահայտչական բառապաշարը, հատկապես սեր բառը և նրանով բաղադրված կազմությունները, ինչպես նաև սրանց ոճական արժեքը, արվել էին զուգահեռներ անվանի մի քանի բանաստեղծների հետ:

Նիստերի ավարտին ծավալվեցին աշխույժ քննարկումներ: Ավագ սե-րընդի գիտնականները երիտասարդներին տվեցին մի շարք արժեքավոր խորհուրդներ: Գիտական նստաշրջանի վերջում փակման խոսքով հանդես եկավ Լեզվի ինստիտուտի տնօրեն Վազգեն Համբարձումյանը: Ծրագրված է երիտասարդ լեզվաբանների 2-րդ գիտաժողովի բոլոր զեկուցումներն ի մի բերել և հրատարակել առանձին գրքով:

ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ. Լ.

Բանասիրական գիտությունների թեկնածու